այդպիսի կոպիտ կերպով վիրաւորելու մի տաղանդաւոր հեղինակի, որի գեղեցիկ գործունէութիւնը քաջալերելու է մեզ համար։ 20 ուսանողներ կամեցել են իրենց երեսի նամակով պաշտպանելու ուսանողութեան պատիւը, բայց դուրս է եկել ընդհակառակը։ Դրան կասեն «յանիրաւ ուղղիր տեղ, աչքը հանել»։

Ս. Դաղեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 3-ին մայիսի

Բաւական ժամանակ է որ ստորագրութիւն կի բացել իմ բարեկամների և ծանօթների մէջ և մտադիր էր երկար շարունակել, յոգուտ թիւրքաց հայ սովատանջների, բայց տեսնելով որ գործս չատ դանդաղ է ընթանում և չատերը բացասում են, ինչպէս սովորութիւն է Թիֆլիսի մեծամասնութեան, ուստի այս հաւաքած չնչին գումարը 20 ր. յանձնում եմ ձեր յարգելի խմբագրութեանը, որ հասցնէք ուր հարկ է, և սորա հետ խնդրում ձեր պատուական «Մշակ»ը լրագրի մի անկիւնում տպէք այն անձանց ազգանունները, որոնք իրանց օգնութեան չնչին կամիքները չը խնայեցին թափելու հայկական թշուառութեան ովկիանոսին մէջ։ Եսայի Վարդանեանց 1 ր., Մկրտչէր Վարդանեանց 1 ր., Գաբրիել Վարդանեանց 1 ր., Թադէոս Միրզաեանց 1 ր., Յովսէփ Խաչատրեանց 1 ր., Յովհաննէս Դարչիեանց 1 ր., Եղազար Դարչիեանց 1 ր., Լազար Արուչանեանց 1 ր., Դաւիթ Սէլթանեանց 1 ր., Մնացական Բէգլարեանց 1 ր., Անդրէաս Ղվիթիսովով (վրացի) 1 ր., Շաքար Կուրադով (վրացի) 1 ր., Սարգիս Յարութիւնեանց 1 ր., օր Եւսէյ Մնէրքեան 1 ր., օր. Եզիսարէթ Բէգլարեան 1 ր., տ. Նազանէյ Յարութիւնեան 1 ր., տ. Օվանէս Դարչիեան 1 ր., տ. Գայիանէ Միրզեան 1 ր., տ. կատարինէ Խաչատրեան 1 ր., Այրի Հռիփսիմէ Տէր-Գրիգորեանց 50 կ., Այրի Բեթլեան Տէր-Գրիգորեանց 5 կ., Ընդամենը 20 ր.

Մնացական Բէգլարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Դաւրէժ, 19 ապրիլի

Մանկական դիմադրութիւնը աւելի բարձր տեղ է բռնում մարդկութեան ասպարէզում և օրինակելի դառնում մեծերին և հասակաւորներին։ Մեր Դաւրէժի Արաման զգրոցի աշակերտները դիմելով վերաբերվելով դէպի Վասպուրականի սովի և թշուառութեան երեսից թափված որբ և անտէրունչ մանկիկները և ուզելով նորանց պատված պապանած բոլորը մի պահա ջրով զովացնել, նորանց ցաւած և անօթութիւնից բորբոքած սամվքաքը մի պահա չոր հագով մեղմել, արին փանց մէջ հետեւեալ հանդանակութիւնը։

Աէէքսան Մէրաչէեանց 7 զրան և 10 չահի, Ջաքարեայ Նազարէթեանց 5 զ., Ջաքարեայ Մելիք-Ազարեան 4 զ., Յակոբ և Սանէան Թումանեանք 7 զ., Վարդան և Գէորգ Տէր-Օհանեանք 3 զ. և 10 չ., Ջորջ Ալաբերեանց 2 զ., Ե. Նազարէթեանց 2 զ., Նազար Յովհաննէսեան 2 զ., Աէէքսան Մ. Աբրահամեանց 2 զ., Ազաքան Տիգրան և Նարիման Կարապետեանց 1 զ. 14 չ., Ազաբել Ղազարեան 1 զ., Սանէան Մ. Սարգսեանց 1 զ., Սանէան Նայեան 1 զ., Մխաք Տէր-Աբրահամեան 1 զ., Գրիգոր Յակոբեան 1 զ. Սահակ Տէր-Յակոբեան 1 զ., Խաչատուր Տէր-Մանուկեանց 1 զ., Նիկոլա Տէր-Օհանեանց 1 զ., Մարգար, Դաւիթ և Պետրոս Միքայէլեանք 4 զ. 13 չ., Արիստակէս և Ներսէս փափազանք 1 զ., Արիստակէս Տէր-Օհանեանց 1 զ., Աէէքսան Մովսէսեանց 1 զ., Սդոմոն Տէր Միքայէլեան 13 չ., Վազգէն Բէժկիանց 13 չ., Գրիգոր Աթիմանդրէեանց 13 զ., Մարգարէ, Սանէան Ջաքարեանց 1 զ., Խաչատուր և Թոմա Թումայէրեանց 1 զ. 13 չ., Գրիգոր Ասրեան 13 չ., Յովսէփ Միքայէլեանց 13 չ., Աւագէ Եղբարեան 10 չ., Նիկողայոս և Սանէան Հայրապետեանց 14 չ., Սարգիս Տէր-Տաճատեան 10 չ., Գէորգ Մ. Ազարեանց 10 չ., Հաթամ Գէորգեան 10 չ., Յովսէփ Պատմագրեան 10 չ., Երիցոյ Բաղդասարեան 13 չ., Միքայէլ և Գաբրիել Շահբազեանց 1 զ. 6 չ., Աէէքսան Աթիմանդրիան 10 չ., Արիստակէս Հաթամեան 10 չ., Սանէան Դաւիթեան 10 չ., Ազաքան և Աբրահամ Կանանեան 14 չ., Աէէքսան Բուղդանեան 10 չ., Աբրահամ Սարգսեան 7 չ., Աէէքսան Սաւադեան 6 չ., Աէէքսան Մելքոնեան 7 չ., Դէորգ Հայրապետեան 6 չ., Մարթէնս Յովհաննէսեան 7 չ., Խաչատուր Հայրապետեան 6 չ., Միմէոն Միքայէլեան 2 չ., Սիմէոն Զաքարեան 2 չ., Եղբ. Սարգսեան 2 չ., Աէէքսան Մուշեղեան 2 չ., Աբրահամ Մովսէսեան 2 չ., Ղազարոս Յարութիւնեան 5 չ., Ազաղ Իպրահիմեան 3 չ., Խաչատուր Խաչանեան 10 չ., Սորանց ամենի գումարն է 68 զրան 16 չահի։

Մի և նոյն եռանդով, նոյն նպատակի համար զիմելեանք զորձի հանդանակութիւնը չարունակվեցաւ Աւարայրեան օրիորդաց զպրոցի աշակերտուհիների մէջ հետեւեալ կերպով։

Օրիորդներ Թամամ և Կատինկա Վարդանեանց 15 զ., Համասիրա և Լուսաբեր Նազարէթեանց 10 զ., Վարժուհի տիկին Աշխէն 7 զ., Օրիորդներ Մարիամ Նազարեանց 3 զ., Զուսանիր և Թէրլեզ Մասունեանց 3 զ., 10 չ., Սաթիկէ և Ազնիւ Ամասունեանց 3 զ., Մանիֆա Տէր-Օհանեանց 5 զ., Լակուհի և Տիգրանուհի փափազանց 2 զ., Սաթենիկ Յովսէփեանց 1 զ., Եղանիա Մնացականեանց 14 չ., Մանեա և Մանիֆա Բէժկեանց 2 զ., Մանիֆա Պողոսեանց 1 զ. 10 չ., բոլորի գումարը 53 զրան 14 չահի, որը միացնելով Արամեան զպրոցի տղայոց գումարի հետ լինում 122 զրան և 10 չահի։ Այս գումարը առւսաց զրամի վերածելով զառաւ 41 բուբլի թղթադրամ։

Նրերկայ Նամակիս հետ, պ. խմբագիր, զրուք կը ստանար Սալմաստեցի վաճառական պ. Աւետիք Արզումանեանից լիշեալ 41 բուբլին, որ խնդրում եմ խնամք ունենալ և հասուցանել իւր նպատակին։

Կանանց ստորագրութիւնը մի և նոյն նպատակով առաջ է գնում, որս արդիւնքը չուտով կը հաղորդեմ, ինչպէս և Լիլավան Թաղի զպրոցների արդիւնքը։

Արմենակ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՇՈՒՇԻ քաղաքից ստացանք 20 բուբլի հետեւեալ նամակով. «Մենք Շուշի քաղաքի ազգային օրիորդական զպրոցի մի քանի աշակերտուհիներս, ցանկալով մեր թաղ կարգութեան չափ նպաստած լինել ընդհանուր ազգօգուտ լուսաւորութեան զորձին, ժողովեցինք մեր մէջ մի փոքրիկ գումար, 20 բուբլի «Արարատեան» ընկերութեան օգնին։ Այդ գումարը լդում ենք ձեզ և խնդրում ենք հասցնել ուր հարկն է։ Նուիրատուների ազգանունները աւելորդ համարեցինք գրել։» Այդ նամակի տակ ստորագրված է Մ. Բասարբեանց։

—

Ստացանք ԲԱԳՈՒՈՑ պ. Գրիգոր Դիլզարեանցից Թիֆլիսի պետական բանկի բաժնի միջնորդութեամբ 114 բուբլի «Արարատեան» ընկերութեան ազգ. քաղաքի մշտական անդամների տուրքը և 197 ր., նոյնպէս յոգուտ «Արարատեան» ընկերութեան միանուագ ժողոված տուրք։ Նուիրատուների ցուցակը կը տպենք։

—

Ստացանք ՄՕՍԿՎԱՅԻՑ պ. Յովհաննէս Փանոսեանից 25 բուբլի Նուէր յոգուտ վանի սովատանջների։

—

Վրաց «Դրօէբա» լրագրի խմբագրի միջոցով յոգուտ Երեւանի սովածների ստացած փողը արդէն ուղարկեցինք Երեւանի քաղաքագլուխ պ. Վարդանեանցին։

—

Շուշեցի պ. Պարսամ Արզումանեանցից ստացանք 3 բուբլի յոգուտ Հայաստանի սովատանջների։

—

Երկու լուշեցի ընկերներ Արրահամ Նասրխանց և Մովսէս Ներսիսեանց ուղարկեցին մեզ 25 բուբլի յոգուտ թիւրքաց Հայաստանի սովատանջների։ Բայց նրանց ընկերութեան տեղը մենք գժուարութեամբ կարդացանք կարդալ. նամակի վրա գրված է. Ռեանարակալ, իսկ ծրարի վրա ռուսերէն լեզուով Բաքու։

—

ՀԱԳԱԹԻ գիւղից մեզ գրում են որ ամեն բան այդտեղ թանգացել է։ Ուտելու գրեթէ ոչինչ չէ ճարվում, բացի հացից։ Ցորենի պուդը արժէ 4 ր. գրվին 3 ր. 50 կ.։ Եղանակը խառն է և դեռ ապրիլի սկզբներում մի արշին խորութեամբ ձիւն էր ընկած գիւղում։ Անասունները ցրտից և սովից սատկեցին։

—

Ստացանք մեծ չնորհակալութեամբ ԹԻՖԼԻՍԻ արուեստաւորների կլուբից 147 բուբլի յոգուտ վանի սովատանջների, որ գումարը գոյացել է այդ նպատակով ապրիլի 23-ին տուած դիմակաւոր պարահանդէսից։ Կլուբի ստացչնա պ. Պորտրագովի հաղորդելով մեզ այդ փողը, ուղարկել է մեզ մի և նոյն ժամանակ ուտած պարահանդէսի մուտքի և ծախսի հաշիւը։

—

Մեզ հաղորդում են զանազան անմիջել լուրեր մի քանիների մասին. օրինակ, Զատկի տօնին պատարագի ժամանակ զանձանակը հիմգերորդ անգամ չը պտտեցնելու պատճառով, նա կատրում է սկիրը և կամենում է սեղանից ցած գալ։ Մի անգամ ևս մի պարոնից միգրութեան վարձը սակաւ ստանալով, մեռնի չիլը զայրանում է գեանին և կատրում։

—

Մեզ գրում են ՆԵՐ-ԱԶՈՒԼԻՍԻՑ, որ Վեհ. կաթուղիկոսի թոյլատրութեամբ այնտեղ բացվել է օրիորդաց զպրոց, որ մինչև այժմ չը կար։ Դէպարդի բացման հանդէսը կատարվել է վարպետանց տանի օրը. հասարակութիւնը մեծ համակրութիւն է ցոյց տալիս նորահաստատ զպրոցին և մեկ չաբաթվայ մէջ հաւաքվեցան մինչև 40 աշակերտուհիներ։

—

ԲՈՐԴՈՒՄԻՑ մեզ հաղորդում են, որ տեղային հայ ժողովուրդը մնացել է առանց քահանայի, թէև կարգադրված է. որ Սուրմալի Տէր-Ց. մի և նոյն ժամանակ հովիւ և Բորդոմի ժողովուրդը, բայց նա իր պարտաւորութիւնները ճշգրտութեամբ չէ կատարում։

—

Մեզ գրում են վաղարշապատից, թէ այնտեղ կազմվել է դատարիպարտ սրիկաներից գողերի մի ամբողջ խումբ, որոնք ոչ միայն գիշերով են գողութիւն անում, այլ կոզապտում են օր ցերեկով։ Սրիկաների համարձակութիւնը այն ասածման յանդգնութեան է հասել, որ ուզղակի դիմում են այս և այն պարոնին ասելով. «Խարջլուխը պրծել է, փող տուր»։ Դա հասում է և տալիս է 10—20 բուբլի, վախենալով, որ եթէ մերժելու լինի, գիշերը կը գայ և մի վնաս կը հասցնէ։ Հետաքրքրականն այն է, որ այս խմբի մէջ գտնվում են և քահանաների որդիներ։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ հաղորդում են, որ տեղային տղայոց զպրոցը իսկա ամենամանների զբաղութեան մէջ է գտնվում, որի ընդհանուր օրիորդաց զպրոցը Հորդիս օր. Մասիկոնեանցի բաւական բարեկարգ զրութեան մէջ է։ Փաղովրդը չատ գոհ է օրիորդի աշխատութիւններից, աշակերտուհիների մէջ բաւական լաւագիտութիւն տեսնելով։

—

Մեզ հաղորդում են ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ, չը նայելով որ 1872 թուին Պարսկաստանի սովի ժամանակ պարսկները մեծ քանակութեամբ ալիւր և ցորեն ստացան մեր կողմերից, այժմ նրանք արգելում են մեր վաճառականներին Պարսկաստանից ցորեն բերել։ Ասում են, որ այդ արգելքը պատճառը գլխաւորապէս մաքսատուի տնտեսականութիւն է, որ մեղք է համարում ուշմանմանականներին նեղութեան ժամանակ օգնութիւն հասցնել։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ հաղորդում են, որ պ. Ն. Բ. խարջրգակցիկով տեղային քաղաքների հետ ցանկանում էր ստորագրութիւն բաց անել յոգուտ վանայ սովատանջների։ Ստորագրութեան թերթը սկզբում ներկայացնում է պ. Ա. Բաղդասարին, որ քաղաքի ամենահարուստներից մէկն է, որ նա ստորագրվի և միւսներն ևս հետեւեն նրա օրինակին։ Պ. Բաղդասարը այսպէս է պատասխանում. «Ես ինչ եմ մեռնելու ուրիշ տեղի քաղաքին, և ուրիշ չէ ստորագրվում»։

—

ՅՈԼԱԿԵՐՏԻՑ չնորհակալութեամբ յայտնում են, որ գաւառական օգնական պ. Բարսեղ Մելիք-Զաքարեանցը և գործակալ պ. Ց. Աւետիսեանցը իրանց բարեգործական աշխատութիւններով մեծ բարերարութիւն արեցին թէ Յոլակերտի և թէ նրա չրջակայ գիւղացիների ժողովրդին, ամեն հնարներ գործ դնելով, թեթեւացնելու չքաւորների գրութիւնը։ Որքան կարելի է լմնան գնով նոց ձեռք բերելու և բոլորովին մինչև չչնչեցնելուն չը ստանալու։ Նոյն պարոնները չը խնայեցին զանազան միջոցներ անել նաև իրանց սեփականութիւնից, թէ փողով և թէ ցորեն բաժանելով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Կ. ՊՕԼՍԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ

—

«Голосъ» լրագրի մէջ կարդում ենք հետեւեալ առաջնորդող յոդուածը։

«Գլադստոն-Բրնիվիլի մինիստրութիւնը ուզարկում է Կ. Պոլիս մի բրև յատուկ դեսպան Գոշենին։ Նա կը փոխարինէ սեր Հենրի Լայարդին, որ ժամանակաւորապէս արձակուրդ է ստացել։ Եթէ ձեւական կողմից նայենք զործի վրա, այդ կարգադրութիւնը նոյն բանն է, ինչ որ արաւ լորդ Բիկոնսֆիլդ, յետ կանչելով Կ. Պոլսից սեր Հենրի Էլիոտին։ Այն ժամանակվայ անգլիական դեսպանը նոյնպէս ժամանակաւոր արձակուրդ ստացաւ և սեր Հենրի Լայարդ գնաց Կ. Պոլիս նրան փոխարինելու համար դրաւտի դեսպանին կոչումով և մի քանի ամսից յետոյ վերջնականապէս հաստատվեցաւ իր պաշտօնի մէջ։

Այդ երկու կարգադրութիւնների նմանութիւնը զրանով էլ վերջանում է։ Կարելի է հաստատ ասել, որ Գոշէն իր նախորդի քաղաքականութիւնը չարունակելու համար չէ գնում Կ. Պոլիս։ Նրա պաշտօնի ժամանակաւոր անուանելը պատճառն այն է, որ սեր Հենրի Լայարդ պատկանում է ազատամիտ կուսակցութեանը և այժմեան մինիստրութիւնը չէ կամենում վիրաւորել նրա ինքնասիրութիւնը, ուղղակի զրելով նրան իր պաշտօնից։ Այնու ամենայնիւ, քանի որ նոր մինիստրութիւնը զոյութիւն կունենայ, ժամանակաւորապէս արձակված դեսպանի դիպլոմատական ասպարէզը վերջացած կարելի է համարել։ Գուցէ պ. Գոշէն վերջնականապէս չէ էլ մնայ Կ. Պոլսի մէջ, բայց նա այնտեղից չի հեռանայ, մինչև իր նախորդի սխալները չէ ուղղի և չի համոզի Բ. Դրանը, որ անգլիական այժմեան մինիստրութիւնը այլ ևս մտադիր չէ երես տալ Բ. Դրանը և վճռել է այսպէս թէ այնպէս գերջ գնել այն անկարգութիւններին, որոնք հետևանք են թիւրքաց կառավարութեան սգիտութեան և որոնք կարող են նորից բարձրացնել արեւելեան հարցը։

«Սեր Հենրի Լայարդի հեռանալը և Արեւելեան-Ռումելիայի անգլիական ներկայացուցիչ Դրումմոնդ Վոլֆի արձակելը պաշտօնից պարզ ցոյց են տալիս թէ պ. Գոշէն ինչ ուղղութեամբ կը գործէ Կ. Պոլսի մէջ։ Բ. Դուռը անգլիական դեսպանատանից այլ ևս պաշտօնական պահանջներ, և բարեկամական խորհուրդներ չի սպասիր, այլ ուղղակի պահանջներ, որոնք հիմնված կը լինեն մի որոշ նախագծի վրա։ Այդ պրոգրամի հիմքը պէտք է լինեն մարիզի Հաշիզիոնի ընդարձակութիւնների ժամանակ ասած հետևեալ խօսքերը «Թիւրքաց կառավարութիւնը կարող է մնալ Բալխանեան թերակղզու վրա միայն այն պայմանով, որ նա հրաժարվի իր անցեալից և կատարեալ եւրոպացի՝ կանի կառավարութիւն դառնայ»։

Բ. Դուռը կարծես հասանում է, որ զորձերի դրութեան այդպիսի փոփոխութիւնը անհրաժեշտ է։ Կ. Պոլսից եկած վիրջին լուրերից երևում է, որ Բ. Դուռը աշխատում է փորձանել այն պահանջների թիւը, որոնցով պ. Գոշէն կարող է նրա դիմել։ Բժշկական մասնաժողովը, որ այդքան երկար ժամանակ ուսումնասիրում էր Կումերքայի սպանդի ուղիղ գրութիւնը, յանկարծ այն եզրակացութեան հասաւ, որ մարդասպանը խելագար չէ։

Պէտք է յուսալ, որ երբ պ. Գոշէն կը հասնի Կ. Պոլիս, Բ. Դուռը կը շտապի վերջացնել Ցուռնասանի, Լերիսզորիայի և դրանց նման միւս հարցերը։ Բ. Դուռը անգլիական նոր դեսպանի ներդասութեան վրա յոյս դնել չէ կարող։ Եթէ անգլիական մինիստրութիւնը մտադիր լինէր չարունակել Լայարդի քաղաքականութիւնը, նրան բոլորովին չէր փոխի և նրա տեղ այնպիսի մարդ չէր նշանակի, որ անգլիական ազատամիտ կուսակցութեան աչքի ընկնող զործիչներից մէկն է։

Խմբագիր—Հրատարակող ԳԷՐԳՈՐ ԱՐՏԵՌՈՒՆԻ